

ՎԵԴՈՒ ՋՐԱՄԲԱՐԻ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՌՈՒՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԶՖԳ ՎԱՐԿ No. CAM 1002 01 Y

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԿՈՂՄԻՑ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՌԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	3-5
ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ	
Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն	6
Ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվություն	7
Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8-14
Ղեկավարության կողմից աուդիտորին ուղղված հավաստագիր	15

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է “Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագրի” ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել ՋՖԳ No. CAM 1002 01 Y Վարկային համաձայնագրով (“Վարկային համաձայնագիր”) ֆինանսավորվող և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի (ՀՏԶՀ ՋՏ ԾԻՄ) կողմից իրականացվող “Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագրի” (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն “Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով” Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՄ-դրամային սկզբունք):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* պարբերությունում:

Մենք անկախ ենք Ծրագրից և ՋՏ ԾԻՄ-ից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – Դրամային միջոցների սկզբունքով հաշվետվությունների պատրաստում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամային միջոցների սկզբունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

Հանգամանքի շեշտադրում – Ծրագիրը իրականացնող կառույցի փոփոխություն

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում 1.4-ին, որտեղ ներկայացված է Ծրագիրը իրականացնող կառույցի փոփոխությունը 14.01.2020թ-ից:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՄԽ) կողմից հրապարակված “ՀՀՀՀՄՄ-դրամային միջոցների սկզբունք” ստանդարտի համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ Շնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ


Վարկային Համաձայնագրի պահանջների պահպանման նպատակով, Ծրագրի ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Զարգացման Ֆրանսիական Գործակալության (ԶՖԳ) միջև 2016թ. հունվարի 26-ին կնքված Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և ԶՖԳ համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
2. Առհանման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Առհանման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն Վարկային Համաձայնագրի:
3. Ծրագրի հաշիվը վարվել է համաձայն Վարկային Համաձայնագրի պայմանների և ԶՖԳ համապատասխան ուղեցույցների:
4. Ֆինանսավորվող աշխատանքները և ծառայությունները ձեռք են բերվել համաձայն Վարկային համաձայնագրի պայմանների և ԶՖԳ համապատասխան ուղեցույցների:

Մեր կարծիքով, 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ծրագրի ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները:

“Բի-Դի-Օ Արմենիա” ՓԲԸ
13 մարտի, 2020թ.

Վահագն Սոփակյան, FCCA
Տնօրեն




Նազիկ Գիգյան
Աուդիտոր

ՎԵՂՈՒ ՋՐԱՄԲԱՐԻ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ԶՖԳ Վարկ No. CAM 1002 01 Y

Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
(Եվրո)

		Փաստացի		Նախատեսված		Շեղում	ԾԳՓ
		Հաշվետու տարի	Անդրական առ 31.12.2019թ.	Հաշվետու տարի	Անդրական առ 31.12.2019թ.		
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ	Ծրագրի հաշիվ (ԶՖԳ վարկ)	1,846,871.37	-			Անդրական առ 31.12.2019թ.	
	Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)	-	-				
		1,846,871.37	-				
Ֆոնդերի աղբյուրները	ԶՖԳ վարկ No. CAM 1002 01 Y	3,000,000.00	47,000,000.00				75,000,000.00
	ՀՀ Կառավարության համաֆինանսավորում	1,271,259.98	8,403,162.22				15,004,358.00
	Ընդամենը	4,271,259.98	55,403,162.22				90,004,358.00
Արտադրության զուտ/(կորուստ)		28,266.31	17,425.56				
Ֆոնդերի օգտագործում	1. Խորհրդատվական ծառայություններ, շինարարական աշխատանքներ, ԾԻԳ-ի գործառնական ծախսեր:						
	Ընդամենը ծրագրային ծախսեր	6,063,839.98	55,338,030.10	8,468,817.30	57,743,007.42	(2,404,977.32)	90,004,358.00
		6,063,839.98	55,338,030.10	8,468,817.30	57,743,007.42	(2,404,977.32)	90,004,358.00
Դրամական միջոցների վերջնական մնացորդ	Ծրագրի հաշիվ (ԶՖԳ վարկ)	82,557.68	82,557.68				
	Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)	-	-				
	Ընդամենը	82,557.68	82,557.68				

Մամիկոն Գաապարյան
Տնօրեն

Նարինե Քեռյան
Գլխավոր հաշվապահ

Հալատամի տարածքային զարգացման հիմնադրամի Զրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղ
13 մարտի, 2020

Ծանոթագրությունների 8-14 էջերը կազմում են այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

ՎԵՂՈՒ ՋՐԱՄԲԱՐԻ ԵՎ ՈՌՈՒՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
 ԶՖԳ Վարկ No. CAM 1002 01 Y

Ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվություն
 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
 (Եվրո)

Բաղադրիչ	Փաստացի		Նախատեսված		Շեղում		ԾԳՓ
	Հաշվետու տարի	Անդրական առ 31.12.2019թ.	Հաշվետու տարի	Անդրական առ 31.12.2019թ.	Հաշվետու տարի	Անդրական առ 31.12.2019թ.	
Բաղադրիչ 1. Վերո ցրամբարի և օժանդակ կառուցվածքների շինարարություն	5,998,773.17	54,610,951.72	8,359,862.13	56,972,040.68	(2,361,088.96)	(2,361,088.96)	77,185,592.00
Բաղադրիչ 2. Ոռգելի մակերեսի վերականգնում, արդիականացում, ընդլայնում	-	382,452.30	-	382,452.30	-	-	11,939,166.00
Բաղադրիչ 3. Ծրագրի իրականացում	65,066.81	344,626.08	108,955.17	388,514.44	(43,888.36)	(43,888.36)	879,600.00
Ընդամենը ծրագրային ծախսեր	6,063,839.98	55,338,030.10	8,468,817.30	57,743,007.42	(2,404,977.32)	(2,404,977.32)	90,004,358.00

Մամիկոն Գապարյան
 Տնօրեն

Նարինե Բեռյան
 Գլխավոր հաշվապահ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղ

13 մարտի, 2020

Ծանոթագրությունների 8-14 էջերը կազմում են այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագիր

2016թ. հունվարի 26-ին Հայաստանի Հանրապետության և Ջարգացման Ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) միջև ստորագրվել է No. CAM 1002 01 Y վարկային համաձայնագիրը, համաձայն որի ԶՖԳ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել է 75,000,000 եվրո գումարը չգերազանցող վարկ:

Վարկը տրամադրվել է ֆինանսավորելու մի քանի ջրամբարների կառուցումը, մասնավորապես Հայաստանի Արարատի դաշտավայրում գտնվող Վեդի ջրամբարի, ազգային գյուղական ոռոգման համակարգի կայունությունը բարելավելու նպատակով:

Գլխավոր համաձայնագրի “Ֆինանսավորման պլան” հավելվածում ԶՖԳ կողմից ֆինանսավորման ծախսերի նախահաշիվը կազմել է 75,003,631 եվրո:

Վարկը տրամադրվել է “Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագրի” (Ծրագիր) իրականացման նպատակով:

Ծրագիրը արդյունավետ է դարձել 2016թ. մայիսի 12-ին: Ծրագրի տեխնիկական ավարտը սահմանված է 2021թ. մարտի 31-ը: ԶՖԳ No.CAM 1002 01 Y վարկի առհանման դիմումների ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է 2021թ. մայիսի 31-ը, իսկ կատարված աշխատանքների և ծառայությունների դիմաց վերջնական վճարումների համար վերջնաժամկետը 2021թ. նոյեմբերի 30-ն է:

1.2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է բարելավել ջրային ռեսուրսների և ոռոգվող գյուղատնտեսության կայունությունը բերրի արարատյան հարթավայրում.

ա) ապահովել հավելյալ վերականգնվող ջրային ռեսուրսներ Վեդու ջրամբարի կառուցման միջոցով,

բ) բարելավել ոռոգման արդյունավետությունը ցանցի վերանորոգման և արդիականացման միջոցով:

Վերացնելով ջրային և ոռոգման ցանցերի սահմանափակումները՝ ծրագրի նպատակն է վերացնել Արարատյան հարթավայրում գյուղատնտեսական հողերը լքելու միտումը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Վեդու ջրամբարի և օժանդակ կառուցվածքների շինարարություն.

Բաղադրիչ 2. Ոռոգելի մակերեսի վերականգնում, արդիականացում, ընդլայնում.

Բաղադրիչ 3. Ծրագրի իրականացում:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

1.3. Ծրագրի բյուջե և ֆինանսավորում

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

- ԶՖԳ No. CAM 1002 01 Y վարկ - ծախսերի ֆինանսավորում 100%-՝ բացառությամբ հարկերի,
- Հայաստանի Հանրապետության Կառավարություն (ՀՀ Կառավարություն)– հարկերի ֆինանսավորում:

Կատեգորիա	ԶՖԳ No. CAM 1002 01 Y վարկ	ՀՀ Կառավարություն	Ընդամենը
	EUR	EUR	EUR
1. Խորհրդատվական ծառայություններ, շինարարական աշխատանքներ, ԾԻԳ-ի գործառնական ծախսեր:	75,000,000.00	15,004,358.00	90,004,358.00
Ընդամենը	75,000,000.00	15,004,358.00	90,004,358.00

Առհանման հայտեր

Վարկի տրամադրումը կատարվում է առհանման հայտերի հիման վրա կանխավճարների ձևով: Առաջին առհանման հայտը ներառում է. ա) թույլատրելի ծախսերի վերաֆինանսավորման համար պահանջվող գումարը և բ) սահմանված նախնական կանխավճարի համար պահանջվող գումարը: Հետագա կանխավճարները տրվում են պայմանով, որ առհանման հայտում նշված կանխավճարին անմիջապես նախորդող կանխավճարի առնվազն 80%-ը և նախավերջին կանխավճարի 100%-ը օգտագործվել են:

1.4. Ծրագրի իրականացում

Մինչև 2019թ. դեկտեմբերի 30-ը Ծրագիրը իրականացվել է ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության Զրային կոմիտեի «Զրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ (ՉՏ ԾԻԳ-) կողմից:

2019թ. դեկտեմբերի 30-ից դադարեցվել է ՉՏԾԻԳ-ի շրջափակումը՝ համաձայն 2019թ. փետրվարի 28-ի թիվ 170-Ն ՀՀ Կառավարության որոշման: ՉՏԾԻԳ-ի փոխարեն Ծրագրի իրականացման շրջափակումները շարունակելու է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը՝ կառուցվածքային ստորաբաժանման միջոցով: 2020թ. Հունվարի 14-ին այդ նպատակով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ ստեղծվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի Զրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղ (ՀՏԶՀ ՉՏ ԾԻՄ):

ՀՏԶՀ ՉՏ ԾԻՄ հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վարդանանց փակուղի 8:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտի համաձայն:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն ներկայացված ժամանակաշրջանների համար:

2.2. Հաշվապահական հաշվառման դրամային միջոցներ հիմունք

Ծրագրի ֆինանսավորումը ճանաչվում է դրամական միջոցների ստացման պահին: Ծրագրի ծախսումները ճանաչվում են որպես Ծրագրի ծախսեր դրանց վճարման պահին:

2.3. Ներկայացման արժույթը

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը եվրոն է (EUR):

Տեղական արժույթով (ՀՀ դրամ, AMD) կատարված ՀՀ Կառավարության համաֆինանսավորումը և ծախսերը փոխարկվում են եվրոյի գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանած փոխարժեքով:

Փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը տեղական արժույթով պահվող դրամական միջոցների վրա ներկայացվում է առանձին տողով Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվության մեջ:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 եվրոն = 553.65 դրամ:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 եվրոն = 537.26 դրամ:

2.4. Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

2.5. Բյուջե

Ծախսերի բյուջեն կազմվում է նախորդ ժամանակաշրջանի փաստացի կուտակային ծախսերին գումարելով պլանավորումը հաշվետու ժամանակաշրջանի համար՝ ըստ քարմացված գնումների պլանի:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

3. Առհանման դիմումների ամփոփ

31.12.2019թ.-ին ավարտված տարվա վերաբերյալ

Առհանման դիմումի համարը	Առհանման դիմումի ամսաթիվը	Առհանման դիմումի գումարը	Առհանման հաստատման ամսաթիվը
		Եվրո	
6	15/04/2019	3,000,000.00	10/05/2019
		3,000,000.00	

4. Ծրագրի հաշվի հաշվետվություն

Հաշվարկային հաշիվ	900000902255
Բանկ	Կենտրոնական գանձապետարան
Հասցե	Մելիք-Աղամյան 1, Երևան, 0010, Հայաստանի Հանրապետություն,
Արժույթը	Եվրո

	ԶՖԳ No. CAM1002 01 Y Վարկ 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
1. Սկզբնական մնացորդ	1,846,871.37
2. Ավելացում. սկզբնական անհամապատասխանություն	-
3. ԶՖԳ. ֆոնդի կանխավճար/համալրում	3,000,000.00
4. Նվազեցում. Ծրագրի հաշվից մարում ԶՖԳ-ին	-
5. Ծրագրի հաշվին համալրված գումարի ներկա մնացորդը	4,846,871.37
6. Ծրագրի հաշվի վերջնական մնացորդ 31.12.2019 դրությամբ	82,557.68
7. Ավելացում. վճարված ընդունելի ծախսերի գումար	4,764,313.69
8. Նվազեցում. ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են Ծրագրի հաշիվ)	-
9. Ընդամենը հաշվառված համալրում	4,846,871.37
10. Տարբերություն (5)-(9)	-

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներառում է ակտիվները, պարտավորությունները և Ծրագրի զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Հաշվետվությունը պատրաստված է հաշվեգրման սկզբունքով, որտեղ գործարքները ճանաչվում են կատարման պահին (այլ ոչ՝ ստացման կամ վճարման պահին):

		31.12.2019 Եվրո	31.12.2018 Եվրո
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ	6	82,557.68	1,846,871.37
Կանխավճարներ	7	6,019,542.09	7,695,845.54
Ընդամենը ակտիվներ		6,102,099.77	9,542,716.91
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կրեդիտորական պարտավորություններ	8	3,401,302.45	2,611,108.10
Ընդամենը պարտավորություններ		3,401,302.45	2,611,108.10
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Աճողական մուտքեր			
ԶՖԳ No. CAM1002 01 Y Վարկ	10.1	47,000,000.00	44,000,000.00
ՀՀ Կառավարություն	10.2	8,403,162.22	7,131,902.24
		55,403,162.22	51,131,902.24
Աճողական ծախսումներ			
Ծրագրի ծախսումներ		(52,377,817.96)	(43,861,961.80)
		(52,377,817.96)	(43,861,961.80)
Արտարժույթի փոխարժեքային օգուտ/(կորուստ)		(324,546.94)	(338,331.63)
Ընդամենը զուտ ակտիվներ		2,700,797.32	6,931,608.81

6. Դրամական միջոցներ

	Բանկ	Արժույթը	31.12.2019	31.12.2018
			Եվրո	Եվրո
Ծրագրի հաշիվ (ԶՖԳ No. CAM 1002 01 Y) վարկ	Գանձապետարան	Եվրո	82,557.68	1,846,871.37
Ընդամենը			82,557.68	1,846,871.37

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

7. Կանխավճարներ

	31.12.2019	31.12.2018
	Եվրո	Եվրո
Շինարարական աշխատանքների գծով (ա)	5,922,701.30	7,480,897.18
Խորհրդատվական ծառայությունների գծով	96,840.79	212,608.6
Գործառնական ծախսերի գծով	-	2,339.76
	6,019,542.09	7,695,845.54

(ա) Կանխավճարները տրվել են շինարարական պայմանագրերի գնի 20%-ի չափով: Կանխավճարները ապահովված են բանկային երաշխիքներով: Բանկային երաշխիքների ժամկետները սահմանված են մինչև աշխատանքների կատարման 90%/100% կամ պայմանագրերի ժամկետի ավարտը: Կանխավճարները մարվում են յուրաքանչյուր կատարողական ակտի գումարից՝ ելնելով բանկային երաշխիքի կամ պայմանագրի պահանջներից:

8. Կրեդիտորական պարտավորություններ

	31.12.2019	31.12.2018
	Եվրո	Եվրո
Շինարարական աշխատանքների գծով (երաշխիքային գումարներ) (ա)	3,401,302.45	2,611,108.1
Խորհրդատվական ծառայությունների գծով	-	-
Գործառնական ծախսերի գծով	-	-
	3,401,302.45	2,611,108.1

(ա) Երաշխիքային գումարները պահվել են ներկայացված կատարողական ակտերից, 5% կամ 10%-ի չափով (համաձայն կնքված պայմանագրերի դրույթների):

9. Ծրագրային ծախսեր

9.1. Ծրագրային ծախսերի բաշխումը ըստ ֆոնդերի

Ծախսային հոդվածներ	Հաշվետու տարի			Կուտակային 31.12.2019թ. դրությամբ		
	ԶՖԳ No. CAM1002 01 Y Վարկ	ՀՀ Կառավարու- թյուն	Ընդամենը	ԶՖԳ No. CAM1002 01 Y Վարկ	ՀՀ Կառավարու- թյուն	Ընդամենը
	Եվրո	Եվրո	Եվրո	Եվրո	Եվրո	Եվրո
1. Խորհրդատվական ծառայություններ, շինարարական աշխատանքներ, ԾԻԳ-ի գործառնական ծախսեր:	4,764,313.69	1,299,526.29	6,063,839.98	46,917,442.32	8,420,587.78	55,338,030.10
Ընդամենը	4,764,313.69	1,299,526.29	6,063,839.98	46,917,442.32	8,420,587.78	55,338,030.10

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

9.2. Ծրագրային ծախսերի բյուջեի կատարում

	Անողական ծախսումներ 31.12. 2019թ. դրությամբ	Ընդամենը բյուջե	Կատարում
Ծախսային հոդված	Եվրո	Եվրո	%
1. Խորհրդարանական ծառայություններ, շինարարական աշխատանքներ, ՄԻԳ-ի գործառնական ծախսեր:	55,338,030.10	90,004,358.00	61%
Ընդամենը	55,338,030.10	90,004,358.00	61%

10. Ֆինանսավորում

10.1. Վարկ ԶՖԳ No. CAM 1002 01 Y

	Հաշվետու տարի Եվրո	Անողական առ 31.12.2019 Եվրո
Նախնական կանխավճար		10,000,000.00
Լրացուցիչ կանխավճար	3,000,000.00	37,000,000.00
Ընդամենը	3,000,000.00	47,000,000.00
Ընդամենը բյուջե		75,000,000.00
Առ 31.12.2019 տրամադրված ֆինանսավորում %		63%

10.2. ՀՀ Կառավարություն

	Հաշվետու տարի Եվրո	Անողական առ 31.12.2019 Եվրո
Ֆինանսավորում	1,271,259.98	8,403,162.22
Ընդամենը բյուջե		15,004,358.00
Առ 31.12.2019 տրամադրված ֆինանսավորում %		56%

Ղեկավարության Կողմից Աուդիտորին Ուղղված Հավաստագիր

13 մարտի 2020

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Դ. Անհաղթ 23/6

Երևան, Հայաստան

Հավաստումների սույն գրությունը ներկայացվում է ՁՖԳ No. CAM 1002 01 Y Վարկային համաձայնագրով (“Վարկային համաձայնագիր”) ֆինանսավորվող և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի (ՀՏԶՀ ՋՏ ԾԻՄ) կողմից իրականացվող “Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագրի” (Ծրագիր) 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի առնչությամբ:

Մենք գիտակցում ենք մեր պատասխանատվությունը, որ.

- Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՀՀՄՍ դրամային հիմունքի համաձայն,
- Հաշվապահական հաշիվները և ֆինանսական փաստաթղթերը ճշգրիտ են և ամբողջական, և ներկայացնում են իրական փաստերը Ծրագրի նպատակներին և ազգային օրենսդրությանը համապատասխան:
- Ներքին վերահսկողության ձևավորում և իրականացում խարդախությունը կանխելու և հայտնաբերելու նպատակով:
- Ծրագրի վերաբերյալ ստացված կամ մեր կողմից ֆինանսավորման հետ կապված տեղեկատվության ամբողջականությունը և համապատասխանությունը
- ցանկացած տեղեկատվության և բացահայտումների առկայություն, բանավոր կամ գրավոր հաստատմամբ, որոնք կարող են պահանջվել աուդիտորի կողմից աուդիտի իրականացման ընթացքում:

Մեր գիտելիքներն ու համոզվածությունը հիմք ընդունելով՝ հավաստում ենք, որ.

- Մենք Ձեզ տրամադրել ենք բոլոր հաշվապահական գրքերը և օժանդակ փաստաթղթերը:
- Չկան էական գործարքներ, որոնք պատշաճ կերպով գրանցված չեն եղել Ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած հաշվապահական հաշվառման հաշիվներում:
- Ներքին հսկողության համակարգը հուսալի է. Ֆինանսական և այլ փաստաթղթերի հաստատումը և վերահսկողությունը, պարտականությունների տարանջատումը, կատարվում է պատշաճ կերպով.
- Ծրագրի միջոցներն օգտագործվել են համաձայն սահմանված բյուջեի,
- Ֆինանսական գործարքներն իրականացվում են ծրագրի նպատակներին և Դրամաշնորհային համաձայնագրի պայմաններին համապատասխան:
- Ֆինանսական միջոցները օգտագործվել են խնայողակա և արդյունավետ եղանակով:
- Չի եղել որևէ խախտում ղեկավար կազմի կամ աշխատակիցների ներգրավման մեջ, որոնք նշանակալի դեր ունեն հաշվապահական հաշվառման և ներքին հսկողության համակարգերում, և որը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:
- Ֆինանսական հաշվետվությունները գերծ են էական սխալներից և բացթողումներից.
- Չեն գրանցվել վերահսկող կազմակերպությունների կողմից հակաօրինական փաստերի կամ խախտումների բացահայտում, որոնք էական ազդեցություն կունենային ֆինանսական հաշվետվությունների վրա:
- Ֆինանսական հաշվետվությունների ամսաթվից հետո որևէ իրադարձություն չի եղել, որը պահանջում է ճշգրտում կամ բացահայտում ֆինանսական հաշվետվություններում:
- Չկան փաստացի կամ սպասվելիք հայցեր:
- Մեր կողմից չեն բացահայտվել խարդախության փաստացի կամ կասկածելի դեպքեր, որոնք ազդում են Ծրագրի վրա և կապված են հետևյալ անձանց հետ.

ա. Ղեկավարություն,

բ. Ներքին հսկողության գործում նշանակալի դեր ունեցող աշխատակիցներ, կամ

գ. այլ անձինք, եթե խարդախության դեպքը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:


Մամիկոն Գասպարյան
Տնօրեն


Նարինե Քեոյան
Գլխավոր հաշվապահ

Հայաստանի Տարածքային Ջարգացման Հիմնադրամի Ջրային Տնտեսության Ծրագրերի
Իրականացման Մասնաճյուղ